

**ԺԴ. 00. 19 «Աչքի հիվանդություններ» մասնագիտությամբ բժշկական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար
ներկայացված Լուսինե Վիտալիի Կամբուլյանի «Կոմպլեմենտի համակարգի
C3 և C4 ֆրակցիաների դերը իմունային ուվեիտների պաթոգենեզում»
թեմայով ատենախոսության վերաբերյալ**

Գրախոսություն

Ատենախոսության արդիականությանը

Ժամանակակից բժշկագիտության մեջ առանձնահատուկ կարևորություն է տրվում ախտաբանական երևույթների պատճառահետևանքային կապերի վերլուծությանը: Մինչ օրս ուվեիտների էթիոպաթոգենեզը լիովին բացահայտված չէ, ուստի շարունակում է մնալ ուսումնասիրման կարևոր ուղղություն:

Կոմպլեմենտի համակարգի դերը ներկայումս ակտիվորեն ուսումնասիրվում է տարբեր ակնային պաթոլոգիաներում: Մասնավորապես, արդեն հաստատված է դրա նշանակությունը տարիքային մակուլոդեգեներացիայի դեպքում: Հետազոտություններ կան նաև դիաբետիկ ռետինոպաթիայի, գլաուկոմայի և ուվեիտների մասին: Ուվեիտների պարագայում աշխատանքների մեծ մասը կատարված է փորձարարական մոդելների վրա, քիչ են արյան հետազոտությունները և առավել սակավ՝ ակնային հեղուկի ուսումնասիրությունները: Այս հանգամանքն էլ հիմք հանդիսացավ հեղինակին ուսումնասիրելու կոմպլեմենտի դերը ակնային հեղուկում:

Կոմպլեմենտի համակարգի դերի պարզաբանումը հնարավորություն կտա նոր մոտեցումներ մշակել ուվեիտների կանխարգելման և բուժման համար, ինչը ևս մեկ անգամ ընդգծում է կատարված աշխատանքի գործնական կարևորությունը:

Ելնելով վերոգրյալից, ատենախոսության թեման, նպատակն ու խնդիրներն արդիական են թե գիտական, թե գործնական առումով:

Աշխատանքի գիտական նորույթը

Առաջին անգամ առաջարկվել է հաշվի առնել կոմպլեմենտի համակարգի C3 և C4 ֆրակցիաների դերը՝ որպես իմունային ուլեիտների պատճառագիտության մաս: Առաջարկվում է այս գործոնները համարել ակնային իմունիտետի բաղադրիչ, հաշվի առնելով, որ ակնային հեղուկում ստացվել է վիճակագրորեն հավաստի տարբերություն դեպքերի և հսկիչ խմբերի այդ ֆրակցիաների միջև, իսկ արյան մեջ հավաստի տարբերություն չի ստացվել:

Ատենախոսությունում ձևակերպված գիտական դրույթների, եզրակացությունների և առաջարկությունների հավաստիության աստիճանը.

Հեղինակի կողմից կիրառված հետազոտական մեթոդները լիովին համապատասխանում են հետազոտության նպատակներին և առաջադրված խնդիրներին: Դրանց կիրառմամբ հաջողվել է լուծել հետազոտության խնդիրները և հանգել գիտագործնական առաջարկների և եզրակացությունների: Ստացված տվյալների վիճակագրական մշակումն ապահովում է արդյունքների բարձր հուսալիություն: Ընդհանուր առմամբ, հետազոտությունը կատարվել է լիարժեք, բավարար քանակությամբ նյութի վերլուծությամբ, ինչը երաշխավորում է ատենախոսությունում ներկայացված գիտական դրույթների, եզրակացությունների և առաջարկությունների հուսալիությունը:

Ատենախոսության կառուցվածքի համապատասխանությունը Բարձրագույն Կրթության և Գիտության Կոմիտեի պահանջներին

Ատենախոսությունը ներկայացված է համակարգչային տեքստի 107 էջի վրա: Ունի ավանդական կառուցվածք, որը ներառում է հապավումների ցանկ, ներածություն, գրականության վերլուծություն, նյութերին և հետազոտական մեթոդներին նվիրված գլուխ, սեփական հետազոտությունների արդյունքների գլուխ, որոնք ներառում են 3-ական ենթագլուխ, ամփոփում, եզրակացություններ, գրականության ցանկ, որը բաղկացած է 107 գրական աղբյուրներից:

Ատենախոսությունը պատկերազարդված է 38 նկարով, պարունակում է 22 աղյուսակ և 16 գծապատկեր:

«Գրականության վերլուծություն» բաժնում հեղինակը կատարել է ժամանակակից աղբյուրների մանրակրկիտ վերլուծություն: Ներկայացվում են արդիական հետազոտություններ կապված կոմպլեմենտի համակարգի ընդգրկվածության հետ տարբեր ակնային պաթոլոգիաներում, ինչպես նաև վերջերս իրականացված իմունոլոգիական հետազոտություններն ուվեիտների տարբեր ենթախմբերի վերաբերյալ:

«Հետազոտության նյութն ու մեթոդները» գլխում նկարագրված մեթոդները տեղեկատվական և համարժեք են դրված նպատակներին, ինչի շնորհիվ ստացված գիտական փաստարկները հավաստի են: Վալիդացված վիճակագրական փաթեթների և հետազոտական մեթոդների կիրառումը թույլ է տալիս ապահովել վստահելի արդյունքներ:

Սեփական հետազոտության արդյունքները շարադրված են երեք ենթագլուխներում՝ արդյունքների մանրամասն վերլուծությամբ: Առաջին ենթագլխում նկարագրված են դեպքերի խմբի ենթախմբերի ընդհանուր նկարագրերը, վերլուծված է յուրաքանչյուր ենթախմբում C3 և C4 ֆրակցիաների միջին կոնցենտրացիաները: Երկրորդ ենթագլխում նկարագրված է խմբերի և ենթախմբերի համեմատական վերլուծությունը: Ապացուցվել է, որ կոմպլեմենտի համակարգի C3 և C4 ֆրակցիաների մակարդակների բարձրացումը ուղեկցում է իմունային ուվեիտների ընթացքին՝ վկայելով ակնային բորբոքային պրոցեսների մեջ դրանց մասնակցության մասին: Վիճակագրորեն հավաստի տարբերություն չի գրանցվել արյան մեջ այս գործոնների հետ կապված դեպքերի և հսկիչ խմբի միջև, իսկ ակնային հեղուկում ստացել են վիճակագրորեն հավաստի տարբերություն: Ամբողջ կոհորտի, դեպքերի և հսկիչ խմբերի համար ստացել են թույլ կապ կոմպլեմենտի համակարգի C3 և C4 ֆրակցիաների արյան և ակնային հեղուկի ցուցանիշների միջև: Հեղինակն այդ թույլ կապն արտացոլել է Bland-Altman-ի գծապատկերների միջոցով: Այսպիսով, միայն արյան զննությունը բավարար չի

լինի ախտորոշում դնելու համար: Ստացվել է հստակ կոռելյացիոն կապ բորբոքման արտահայտվածության և ակնային հեղուկում C3, C4 գործոնների քանակական գրադիենտի միջև: Դեպքերի խմբում C3 և C4 գործոնների համար որոշվել են զգայունության և սպեցիֆիկության սահմանային արժեքներ: Այս արժեքների կիրառումն անգնահատելի կլինի հետագայում ուլեիտների ախտորոշման և կանխարգելման հարցում: Հեղինակի կողմից կատարված է նաև ենթախմբերի մանրակրկիտ վերլուծություն: Ստացված տվյալները թույլ կտան հետագայում յուրաքանչյուր ենթախմբի համար ավելի թիրախային բուժումներ մշակել: Երրորդ ենթագլխում հեղինակը համեմատել է գրականության մեջ առկա սակավաթիվ հետազոտությունները սեփական ուսումնասիրության արդյունքների հետ՝ ընդգծելով վերջինիս առավելությունները:

Աշխատության արդյունքում ստացված եզրակացությունները համարժեք են առաջադրված նպատակներին և խնդիրներին, բխում են իրականացված ուսումնասիրություններից և արժանահավատ են: Աշխատանքն ունի բարձր գիտագործնական արժեք, որն ուղղված է ուլեիտների կանխարգելմանը և հետագայում բուժման թիրախային սխեմաների մշակմանը: Ներկայացված գործնական առաջարկությունները կարևոր նշանակություն ունեն առողջապահության կազմակերպման և ակնաբույժների մասնագիտական գործունեության համար:

Ատենախոսության թեմայով հրապարակվել են 4 հոդվածներ արտասահմանյան և տեղական գիտական հանդեսներում: Հոդվածներից մեկը տպագրվել է 1-ից բարձր ազդեցության գործակից ունեցող ամսագրում:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը, արտացոլում է դրա հիմնական արդյունքները, պաշտպանությանը ներկայացված դրույթները, մշակված է ԲԿԳԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխան:

Գրախոսվող ատենախոսության վերաբերյալ հիմնարար դիտողություններ չկան, բացառության որոշ հարցերի.

1. Արդյո՞ք ROC-ի արժեքները ցույց են տալիս, որ ակնային հեղուկում C3/C4-ը կարող է դառնալ կլինիկական դիագնոստիկ մարկեր:

2. Ֆուքսի ուվեիտի դեպքում C3-ը բացակայում էր, իսկ C4-ը բարձր էր. արդյո՞ք սա մատնանշում է այլ իմունային ուղու ակտիվացում:

Եզրակացություն.

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրահանգել, որ Լուսինե Վիտալիի Կամբույանի «Կոմպլեմենտի համակարգի C3 և C4 ֆրակցիաների դերը իմունային ուվեիտների պաթոգենեզում» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն աշխատանք է, կատարված է հիմնարար մեթոդներով և ունի գիտագործնական նշանակություն:


Աշխատանքը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ ինքը՝ հեղինակը, արժանի է բժշկական գիտությունների թեկնածուի հայցվող կոչմանը:

Պաշտոնական ընդդիմախոս, Ս.Վ.Մալայանի անվան ականաբուժական կենտրոնի տնօրեն, Բ.Գ.Ղ. Հովսեփ Միհրանի Միրոյան

06.10.2025թ.

Պաշտոնական ընդդիմախոս Հովսեփ Միհրանի Միրոյանի ստորագրությունը հաստատում եմ:

Ս.Վ.Մալայանի անվան ականաբուժական կենտրոնի կադրերի բաժնի տեսուչ



Լ.Մ.Վարդանյան